

ԱՆԻ ԱՐՏԱԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ «ԿՈՄԵՂԻԱ ԴԵՆ ԱՐՏԵՐ
ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ XX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՂՐԱՄԱՏՈՒՐԳԱՅՈՒՄ»

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Ժամանակակից գրականագիտության ամենարդիական խնդիրներից է՝ տեքստի հնարավոր մեկնաբանությունների ընդլայնումը, մասնավորապես՝ դրանում գրական և մշակութային ավանդույթների դրսևորումների բացահայտումը: Այս առումով Անի Համբարձումյանի ատենախոսության թեմայի ընտրությունը ողջունելի է: Նվիրված լինելով XX դարի դրամատուրգների գործերում կոմեդիա դել արտեի ազդեցության և վերաիմաստավորման ուսումնասիրությանը, այն անկասկած համահունչ է ժամանակակից գրականագիտական միտումներին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և 111 վերնագիր պարունակող գրականության ցանկից:

Ներածության մեջ ատենախոսը բնութագրում է *կոմեդիա դել արտե* ժանրը, ներկայացնում է դրա զարգացման պատմությունը, հիմնավորում է թեմայի ընտրությունը, տալիս է քննադատական գրականության ակնարկ, ձևակերպում է աշխատանքի նպատակը և խնդիրները, նորույթը և արդիականությունը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «*Կոմեդիա դել արտեի գեղագիտությունը մշակութաբանական համատեքստում*», բաժանված է երեք ենթագլուխների, որոնցից *առաջինում* ուսումնասիրվում են կոմեդիա դել արտեի դիմակները, ժանրի սկբնավորումը և զարգացումը: Գրական և քննադատական աղբյուրների վրա հիմնվելով՝ ատենախոսը վերլուծում է անտիկ դիցաբանության և թատերական

ավանդույթների, ծեսերի, միջերի և ստեղծվող արքեոտիպերի դերը եվրոպական թատրոնի ձևավորման գործում:

Նյութի հիմնավոր իմացությամբ ատենախոսը քննարկում է կատակերգական թատրոնի ընկալումը Միջնադարում և Վերածննդի դարաշրջանում, ինչպես նաև դիմակների «կոծկման» և «բացահայտման» գործառույթները, «արքեոտիպայինի և անհատականի», «դիմակ – Ես» հարաբերակցությունները:

Առաջին գլխի *երկրորդ ենթագլուխը* նվիրված է կոմեդիա դել արտեի իմպրովիզացիոն բնույթին, ժեստայնության և լացցիների նշանակության քննարկմանը:

Հայտնի է, որ իմպրովիզացիան ժանրի ամենակարևոր հատկանիշերից է, որը անմիջականորեն կապված է դերասանի վարպետության հետ, սակայն ատենախոսն անդրադառնում է նաև հանպատրաստից խաղի տարածման պատճաներին. դրանք են միասնական ազգային լեզվի բացակայությունը և միջավայրին ձուլվելու անհրաժեշտությունը: Լացցիների բազմաթիվ և գրեթե անծանոթ օրինակները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, իսկ ժեստայնությանը՝ որպես նշանային համակարգի նվիրված հատվածում, ատենախոսը կարևորում է շարժումների նշանակությունը իտալերեն չիմացոց հանդիսատեսի առաջ դերասանների ելույթների ժամանակ:

Առաջին գլխի *երրորդ ենթագլխում* ուսումնասիրվում է կոմեդիա դել արտեի ազդեցությունը եվրոպական դրամատուրգիայի վրա: Հիմնական ուշադրությունը իրավացիորեն հատկացված է կոմեդիա դել արտեի ավանդույթների զարգացմանը Գոլդոնիի և Գոցցիի պիեսներում, նրանց գաղափարական և գեղագիտական սկզբունքների տարբերություններին և ընդհանրություններին: Ենթագլխի երկրորդ մասում ուսումնասիրվում են տարբեր թատերական գործիչների մոտեցումները կոմեդիա դել արտեի հայեցակարգին, դրանց թվում՝ Ժ.Սանդ, Մ. Սանդ, Քրեյգ, Մեյերխոլդ, Միկլաշևսկի, Ժակ Կոպո:

Ատենախոսության *երկրորդ գլուխը* վերնագրված է «*Կոմեդիա դել արտեն Լուիջի Պիրանդելլոյի թատերական տեսության հիմք. ինքնություն-դիմակ գուգահեռը*»: Վերլուծության է ենթարկվում կոմեդիա դել արտեի Պիրանդելլոյի տեսլականը և դրա արտահայտությունը նրա «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» և «Հենրի IV» պիեսներում: Դրվատելի է, որ վերլուծության ենթարկելով Պիրանդելլոյի «Հումորիզմ» և «Արվեստը և ժամանակակից գիտակցությունը» աշխատությունները, ատենախոսը համեմատում և հակադրում է դրացնում արտահայտած կարծիքները Ա.Ալեսսիոյի, Ջ Լորչի և Ջ.Ֆիշերի դրույթների հետ: Հաջողված եմ համարում նաև Պիրանդելլոյի՝ կոմեդիա դել արտեի ընկալումների փոփոխության վերլուծությունը, մասնավորապես՝ ինքնաբուխության, դիմակի դերի, դե Ֆիլիպո եղբայրների ազդեցության տակ ձևավորված դերասանի գործառույթի: Ատենախոսն ընդգծում է, որ Պիրանդելլոն կոմեդիա դել արտե պատմականորեն ձևավորված ժանրը վերածում է տեսության, որի հիմնական դրույթները մարմնավորվում են նրա գեղարվեստական երկերում : Թեև գլխի վերնագիրը ենթադրում է անդրադարձ հեղինակի պիեսներին, ինձ շատ համոզիչ է թվում «Հանգուցյալ Մատտիա Պասկալը» վեպի վերլուծությունը քննարկվող տեսական հարցերի (դիմակավորում, սոցիալական սուտ, ազատություն, արքունի, ինքնության կոծկում և այլ) համատեքստում:

Ատենախոսություն *երրորդ գլուխը* նվիրված է իտալական բեմի նորարարներին ու կոմեդիա դել արտեի ժամանակակից մեկնաբանություններին, այն բազկացած է երեք ենթագլուխներից: Առաջինը վերնագրված է «Կյանքի և իմպրովիզի միջակայքում. դիմակ-պերսոնաժների ապամոնտաժումը Պետրոլինիի դրամատուրգիայում»: XX դարի իտալական թատրոնի բազմազան ուղղություններին հետևող հեղինակներից ատենախոսն առանձնացնում է Էտտորե Պետրոլինիին, ուշադրության արժանացնելով մասնավորապես նրա արտահայտչությունը և կառնավալային դինամիզմը, ինչը թույլ է տալիս նրան համարել կոմեդիա դել արտեի

իրավահաջորդը: Քննարկվում են Պետրոլիինի պիեսների կաուցվածքը, կատակերգական տեսարանները, սյուժեների պարզությունը, դերասանական հմտությունը, երաժշտական տարրը, գրոտեսկը: Հատկապես հաջողված են համարում դրամատուրգի «Ներոն» պիեսի վերլուծությունը, դրանում դիմակալերսոնաժների ապամոնոստիան հնարի մեկնաբանությունը: Ատենախոսն ընդգծում է Պետրոլիինի պիեսներում և տեսական դույթներում հանդիսատեսի դերի գնահատումը, իմպրովիացիոն բնույթին վերադարձը, կոմեդիա դել արտեին հատուկ սլիտամենտո հնարի օգտագործումը:

Ատենախոսության ամենահաջողված հատվածներից է երրորդ գլխի *երկրորդ ենթագլուխը*, որում քննարկվում է կոմեդիա դել արտեի ավանդույթի վերակենդանացումը Էդուարդո դե Ֆիլիպոյի «Պուլչինելլայի որդին» կատակերգության օրինակով և կատարվում է պիեսի հիմնավոր և համոզիչ վերլուծություն: Հաջողված են համարում նաև Դարիո Ֆոյին նվիրված հատվածը՝ երրորդ գլխի *երրորդ ենթագլուխը*, որում վերլուծության են ենթարկվում Ֆոյի ստեղծագործություններում կոմեդիա դել արտեի լեզվական ավանդույթի, գրոտեսկի, ձանձիկ կերպարի, մնջախաղի և այլ հատկանիշների նորարացման առանձնահատկությունները:

Եզրակացություններում ի մի են բերվում հետազոտության արդյունքները:

Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունը հիմնականում շատ լավ տպավորություն է թողնում, այն գրված է գեղեցիկ հայերենով, եզրակացությունները հիմնավոր են:

Անի Համբարձումյանը լավ է տիրապետում նյութին և, անկասկած, հիմնականում լուծել է իր առջև դրված գիտական խնդիրները:

Սկզբունքային դիտողություններ չունեն, սակայն աշխատանքը տպագրելու դեպքում խորհուրդ կտամ հաշվի առնել որոշ բացթողումներ: Այսպես՝

1. Առաջին գլխի երրորդ ենթագլուխը վերնագրված է «Կոմեդիա դել արտեի ազդեցությունը եվրոպական դրամատուրգիայի վրա», սակայն ատենախոսը սահմանափակվում է միայն իտալացի Գոլդոնիի և Գոցցիի պիեսներում այս ազդեցության վերհանմամբ: Ենթադրվում էր, որ կուսումնասիրվեն նաև Ֆրանսիայում Մոլյերի, Բոմարշեի, Անգլիայում՝ Դոուսոնի, Չեպինի, Չեստերտոնի, Քրիստիի և այլոց պիեսները: Կամ պետք էր վերնագիրը փոխել, «եվրոպականը» փոխարինելով իտալականով:

Առաջարկում եմ այդ մասը տեղափոխել երկրորդ գլխի սկիզբ, Պիրանդելլոյից առաջ, իսկ նույն ենթագլխի երկրորդ մասը, որը նվիրված է թատերական գործիչների տեսություններին, տանել երրորդ գլուխ: Այսպիսով նաև ավելի համաչափ կդառնա ատենախոսության կառուցվածքը:

2. Ներածության մեջ իտալական կոմեդիա դել արտեի ծագման մասին վարկածները ներկայացնելիս պետք է նշվեր առաջին հերթին հին հռոմեական *ատելլանան*, որին ատենախոսն անդրադառնում է առաջին գլխում:

3. Կարևոր եմ համարում նաև որոշ տերմինների հստակեցումը: Այսպես, ընդունված է դիմակների հայտնի խումբը անվանել *ձաննի*, այլ ոչ *զաննի*: Տարօրինակ է թվում *ժեստայնություն* տերմինը, կամ հանպատրաստից խաղը նկատի ունենալով օգտագործել *իմպրովիզ* տերմինը, *իրոնիկը* և *սատիրիկը* հանգիստ կարելի է փոխարինել հեգնականով և երկիծականով և և արդյո՞ք կարելի է կոմեդիա դել արտեի փոխարեն օգտագործել ուղղակի դել արտե:

4. Տպագրման դեպքում պետք է ուշադրություն դարձնել նաև հանդիպող վրիպակներին:

Վերոնշյալ նկատառումները, սակայն, չեն նսեմացնում հետազոտության զիտական արժեքը: Ատենախոսին հաջողվել է համակողմանի հետազոտել և լուծել առաջ քաշված խնդիրները և զիտական պատշաճ մակարդակով պաշտպանել իր դրույթները:

«Կոմեդիա դել արտեի վերաիմաստավորումը XX դարի իտալական դրամատուրգիայում» թեկնածուական ատենախոսությունը բավականին հետաքրքիր հետազոտություն է, համապատասխանում է նմանատիպ աշխատություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը Անի Արտակի Համբարձումյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
բ.գ.թ., պրոֆեսոր



Ն.Մ. Խաչատրյան

Ն.Մ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում են

Վ.Բրյուսովի անվ. ՊՀ-ի գիտ քարտուղար



Հ.Փիլավջյան